Կ ա ր ծ ի ք

Ժենյա Վազգենի Տեր-Վարդանյանի

<<Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում>> խորագրով ԺԳ. 00.02 ,Դասավանդման և ուսուցման մեթոդիկա / անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայալեզու ուսանողների գործարար հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման հիմնախնդիրը արդիական է: Բարձրագույն կրթական հաստատություններում խնդիր է դրվում զարգացնել անգլերենի հաղորդակցական կարողությունները տարբեր դասընթացներում՝ մասնագիտական և մասնագիտական կողմնորոշման: Ակնհայտ է, որ դասընթացների նպատակները տարբեր են, ուստի ամեն մի կոնկրետ դաս պլանավորելիս անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել, թե ինչպես է սահմանվում <<հաղորդակցական կոմպետենցիա>> հասկացությունը, առ այն , որ ուսանողը պետք է տիրապետի ոչ միայն ամենօրյա անգլերենին, այլև մասնագիտական կողմնորոշման անգլերենին՝ կիրառվող գործարար ոլորտում:

Հետազոտության արդիականությունը՝ պայմանավորված ՀՀ-ում բարձրագույն կրթական հաստատություններում գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման անհրաժեշտությամբ՝ կասկած չի հարուցում:

Ատենախոսը հստակ ձևակերպել է հետազոտության նպատակը՝ խնդիր դնելով մշակել գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունները զարգացնող մեթոդական համակարգ՝ հաշվի առնելով <<Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառություն>> (CLIL-Content and Language Integrated Learning) նորարարական մոտեցման առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտի, առարկայի, վարկածի ձևակերպումները հստակ են:

Հետազոտության գիտական նորույթը փաստացի հիմնավորվել է ատենախոսի կողմից կատարված փորձարարական ուսուցմամբ՝ իրականացված Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում և Իսպանիայի Գրանադայի համալսարանում: Ատենախոսին հաջողվել է ստեղծել գործարար անգլերենի ուսուցման գործընթացում հաղորդակցական կարողությունների զարգացման

արդյունավետ մեթոդական համակարգ, հիմք ընդունելով CLIL կրթական մոտեցման սկզբունքները:

Դրական է այն, որ ատենախոսը քննության առարկա է դարձրել ոչ միայն լեզվակիր գործարարների հաղորդակցական, այլև մասնագիտական վարքագիծը:

<<Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում>> վերնագրով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 150 համակարգչային էջ է:

Ատենախոսության թեմայով տպագրված է 6 գիտական աշխատանք, որոնց ցուցակը բերված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի ներածական մասում ատենախոսը հիմնավորում է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացնում է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխի <<Գործարար անգլերենը մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում>> առաջին ենթագլխում <<Մասնագիտանան կողմնորոշման անգլերենի ուսուցման նպատակն ու խնդիրները>>, ատենախոսը համեմատում է <<Ընդհանուր անգլերենի>> և <Մասնագիտական կողմնորոշման անգլերենի>> (ESP) դասընթացները, բացահայտում նմանություններն ու տարբերությունները, արդյունքում կոնկրետացնելով գործարար անգլերենի ուսուցման դասընթացի նպատակն ու խնդիրները:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված <<Գործարար անգլերենի ուսուցման առարկան, նպատակն ու խնդիրները>>, Ժենյա-Տեր Վարդանյանը ներկայացնում է <<Անգլերենը ընդհանուր գործարար նպատակների համար>> և <<Անգլերենը հատուկ գործարար նպատակների համար>> դասընթացների զուգադրական վերլուծությունը:

Վերլուծելով գործարար անգլերենի որոշ դասագրքեր, ատենախոսը ներկայացնում է գործարար անգլերենի դասագրքերի ընտրության չափանիշները:

Երրորդ՝ <<Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառության հիմնախնդիրը գործարար անգլերենի դասընթացում>> ենթագլխում ատենախոսը վերլուծում է <<Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառության>> (CLIL-Content and Language Integreated Learning) հիմնախնդիրը:

Երկրորդ գլխի <<Գործարար անգլերենի լեզվանյութի ուսուցման հիմնախնդիրն արդի փուլում>> առաջին <<Մասնագիտական բառապաշարի ընտրության և

ուսուցման սկզբունքները գործարար անգլերենում>> ենթագլխում, ատենախոսը ներկայացնում է գործարար անգլերենի բառապաշարի ընտրության և ուսուցման, ինչպես նաև մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման սկզբունքները:

Երրորդ՝ <<Մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրները գործարար անգլերենի դասընթացում>> ենթագլխում, Ժենյա-Տեր Վարդանյանը սահմանում է <<խոսույթ>> հասկացությունը, ներկայացնում է գործարար խոսույթի ուսուցման հիմնական մոտեցումները, անգլերենի գործարար խոսույթում միավորվող 4 դարձվածաբանական-իմաստային դաշտերը:

Աշխատանքի երրորդ գլխի <<Գործարար անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը>> առաջին ենթագլխում ատենախոսը սահմանում է <<հաղորդակցական կոմպետենցիա>> հասկացությունը, վերլուծում է նրա բաղադրիչները, հստակեցնում է գործարար անգլերենի ուսուցման հիմնական նպատակը, ինչպես նաև հաղորդակցական և մասնագիտական կոմպետենցիաների հարաբերակցությունը:

Երկրորդ՝ <<Մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրները գործարար անգլերենի դասընթացում>> ենթագլխում, Ժենյա-Տեր Վարդանյանը քննության առարկա է դարձնում գործարար հաղորդակցման բովանդակային և գործառական բնութագրերը, ինչպես նաև գործարար հաղորդակցական կարողություններն ու հմտությունները զարգացնող ուսումնական նյութերն ու տեխնոլոգիաները:

Երրորդ <<Գործարար խոսույթի ուսուցման հիմնական մոտեցումները>> ենթագլխում Ժենյա-Տեր Վարդանյանը համեմատում է <<խոսույթ>> ,<<տնտեսական խոսույթ>> ,<<գործարար խոսույթ>> հասկացությունները, ներկայացնում է խոսույթի տեսակները: Ատենախոսը ներմուծում և դիտարկում է <<սահմանակարգային գործարար խոսույթ>> հասկացությունը:

Երրորդ <<Գործարար անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը>> գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին <<Հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը՝ որպես գործարար անգլերենի ուսուցման հիմնական նպատակ>> ենթագլխում ատենախոսը սահմանում է <<հաղորդակցական կոմպետենցիա>> հասկացությունը ըստ նրա հիմնական բաղադրիչների: Հետազոտության խնդիրները լուծելու տեսանկյունից արդյունավետ քայլ է սովորողների ռեֆլեքսիվ գործունեության տեսակների վերլուծությունը:

Երրորդ գլխի <<Հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեխնոլոգիաները գործարար անգլերենի դասընթացում>> ենթագլխում Ժենյա-Տեր Վարդանյանը համապարփակ վերլուծության է ենթարկում գործարար հաղորդակցման հիմնական գործառույթները: Առանձին հետազոտության առարկա կարող է դառնալ այն բաժինը, որը վերաբերում է գործարար անգլերենի ուսուցման գործընթացում կիրառվող ուսումնամեթոդական նյութերին ու միջոցներին:

Երրորդ գլխի <<Գործարար անգլերենի փորձարարական ուսուցման արդյունքների ամփոփումը>> ենթագլխում ատենախոսը ամփոփում է հետազոտության արդյունքները: Հետազոտության կարևոր բաղադրիչներից է ատենախոսի կողմից իրականացված սովորողների միջմշակութային կոմպետենցիայի մակարդակի գնահատման արդյունքները ամփոփող SWOT վերլուծությունը: Նորույթներից կարելի է առանձնացնել CLIL կրթական մոտեցման հիմնական չափանիշների վերլուծությունը, որն ատենախոսն իրականացրել է հետազոտության խնդիրները լուծելիս:

Հետազոտության արդյունքները հավաստի են:

Ընդհանուր առմամբ իրականացված է ամբողջական, ավարտուն հետազոտություն: Այն շարադրված է գրագետ հայերենով: Հոդվածները և սեղմագիրն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Կարծում ենք, որ որոշ նկատառումներ կօգնեն ատենախոսին նորովի քննել որոշ հարցեր.

1. Ատենախոսի դիտարկմամբ դերախաղն ու մասնագիտական սցենարը հավասարության եզրերում են: Հարկ է հստակեցնել պարզաբանումը :
2. Եզրակացության երկրորդ կետն ավելի շատ վերաբերում է տեսական նշանակությանը և ոչ թե եզրահանգմանը:
3. Եզրակացության մի քանի դրույթ անդրադառնում է CLIL կրթական մոտեցմանը: Կարելի է եզրակացության վերջին երեք դրույթները համախմբել:
4. Աշխատանքում տեղ են գտել որոշ տեխնիկական սխալներ:

Այսպիսով, կարելի է պնդել, որ ատենախոսության թեման արդիական է, այն ունի տեսական և գործնական նշանակություն, և ատենախոսի կողմից մշակված գործարար անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը ներկայացնում է գիտագործնական նորույթ: Կարելի է վստահորեն եզրահանգել, որ Ժենյա Վազգենի Տեր-Վարդանյանի <<Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում>> խորագրով թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ

ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 <<Դասավանդման և ուսուցման մեթոդիկա>> (անգլերեն լեզու) մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա. Ա. Ոսկանյան

Ա. Ա. Ոսկանյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ-ի գիտ.քարտուղար Մ. Հովհաննիսյան
05.19. 2022թ.